ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«17» 03 2025թ. N 21/Ո-17

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-25/1

Մասնակից՝ «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ

/ՀՎՀՀ 00429084, գործունեության հասցե՝ ք. Երևան, Աճառյան 44, հեռ. +374 94 45 85 10 /

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար տպագրության և առաքման ծառայությունների գնման նպատակով 20.02.2025թ. հայտարարվել է ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-25/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), որը զբաղեցրել է առաջին տեղ:

Գնահատող հանձնաժողովի 28.02.2025 թվականի կայացած նիստում Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ, հրավերով սահմանված կարգով, հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և հնարավորություն է տրվել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունը:

Հրավերով սահմանված ժամկետում Ընկերությունը հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին է ուղարկել հայտով ներկայացված փաստաթղթերից՝ լիազորագրի նոր օրինակները:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ.

1) 25.02.2025թ. Ընկերության կողմից Աննա Մանուկյանին տրամադրված լիազորագիրը Աննա Մանուկյանի կողմից պատվիրատուին է ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 11-րդ

ենթակետի և հրավերի 8.18 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման պահանջներին ոչ համապատասխան. փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանց ներկայացման համար սահմանված պահանջներին. փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը փաստաթղթերը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2) Ըստ «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացված, Աննա Մանուկյանին 25.01.2025թ. և 01.01.2025թ. տրամադրված լիազորագրերում առկա են անհամապատասխանություններ, առ այն, որ գնանշման հարցման «ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-25/1» ծածկագրով հանձնաժողովը ձևավորվել է Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի 18.02.2025թ. հրամանով և գնանշման հարցման հայտարարությունը և հրավերը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 20.02.2025 թվականին, հետևաբար 25.01.2025 թվականին «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերության տնօրենի կողմից՝ լիազորագրի տրման օրը՝ 25.01.2025թ. նշված ծածկագրով գնման ընթացակարգ չի եղել:

Ըստ այդմ՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկվել է մասամբ՝ թերի:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 11-րդ ենթակետի, 41-րդ, 42-րդ կետերի իրավակարգավորումներով, հայտի գնահատման արդյունքների ամփոփման նիստում որոշել է Ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել հայտը:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման փաստը՝ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված շտկման ենթակա փաստաթղթերը, որը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման.

Որոշեցի՝

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությանը ներառելու համար դիմել լիազորված մարմին՝ համապատասխան գործընթացի կազմակերպման համար:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ԱՐՇԱԿՅԱՆ**